

Դ. ՎԱՐՈՒԹԱՆԻ «ՍԱՐՍՈՒՌՆԵՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վ. ԳԱՐԻԵԼՅԱՆ

Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի վերջին դասարանի աշակերտ Դանիել Զպուգբյարյանը ոգևորվելով «Բազմավեպում» տպագրած իր բանաստեղծությունների գտած շերտ ընդունելությունից, 1905 թ. ամռանը, ուսումնական տարվա վերջին օրերին Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության մամուլի վարչությանն է ներկայացնում բանաստեղծությունների ձեռագիր մի ժողովածու (երկու աշակերտական, 84 էջանոց տետրով), որը վերնագրված էր «Սարսուռներ»։ Առաջին անգամ Դանիել Զպուգբյարյանը ընտրել էր գրական կեղծանուն՝ Վարուժան։

Սիմոն Երեմյանի հետ նախնական պայմանավորվածության համաձայն այդ ժողովածուի բանաստեղծությունները նախ պիտի տպագրվեին «Բաղմավեպ» և «Գեղունի» հանդեսներում, ապա՝ առանձին գրքով։

Այդպես էլ եղավ։ 1905 թ. ուշ աշնանը «Գեղունիում» և «Բազմավեպում» լույս տեսավ այդ բանաստեղծություններից մի մեծ փունջ, իսկ «Գեղունիում» լույս տեսածներից կազմվեց ժողովածու, որ տպագրված և պատրաստ էր արդեն 1905 թ. դեկտեմբերին, սակայն հեղինակին տրվեց 1906 թ. փետրվարին։ Հենց այդ պատճառով էլ գրքույկի վրա գրված էր՝ 1906 թ.։ («Սարսուռներ», ինչպես նաև Վարուժանի մյուս ժողովածուների ստեղծման պատմության մանրամասնությունները տե՛ս մեր «Դ. Վարուժանի գրքերի ստեղծման պատմությունից» հոգվածում, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1975, № 4, էջ 103—116)։

Վարուժանի նամակներից մեկը գիտենք, որ ժողովածուն տպագրվել է աղճատված, գրեթե կիսով չափ։ Վարուժան պիտու էր ստույգ հայտնի չի եղել, թե քանի՞ բանաստեղծություն է նախապես եղել հեղինակի ներկայացրած ժողովածուում, ստույգ քանի՞ օր չի տպագրվել գրքով և ի՞նչ բնույթի բանաստեղծություններ են եղել դրանք։ Տարբեր գրականագետներ ու հուշագրողներ, հենվելով բանաստեղծի նամակներում գրեցրված վալրույթի վրա, կամ պարզապես ենթադրություններ անելով, կարծիք են հայտնել, թե դա եղել է մի ստվար ժողովածու, որ ընդգրկել է բանաստեղծի 1901—1905 թթ. բոլոր, նույնիսկ սիրային, լավագույն բանաստեղծությունները, կամ թե դրանք եղել են հայրենասիրական ու հակաթուրք տրամադրությունների արտահայտություններ, կամ սոցիալական բողոքի էջեր, որոնք մխիթարյան հայրերը դիտմամբ դուրս են թողել։

Վերջին տասնհինգամյակում Վարուժանի արխիվի, հատկապես ձեռագրերի կենտրոնացումը Չարենցի անվան թանգարանում, հնարավորություն տվեց վարուժանագիտության մի շարք հարցերի նորովի լուսաբանման և ճշգրտման։

Վարուժանի անտիպ ժողովածուների, նամակների ու այլ նյութերի ուսումնասիրությունը լույս է սփռում նաև «Սարսուռների» վրա, հնարավորություն տալով ճշգրտել, թե քանի բանաստեղծություն է եղել հեղինակի ներկայացրած ձեռագիր ժողովածուում և որոնք են եղել դրանք։

«Սարսուռների» ոչ ամբողջական տպագրության պատճառների մասին հուշում են Տիրոջանի, Էփրեկյանի՝ Վարուժանի գրած և Վարուժանի՝ Տիրոջանին, Էփրեկյանին, Չոպանյանին ու Թեքեյանին գրված նամակները։ Վախճր չույեց հրատարակել անոնց շեշտերը գայթակղեցուցիչ գտնալով իր («հնագրային կուսուժյան») և պահպանողականության՝— գրում է Վարուժանը Թեքեյանին, իսկ Չոպանյանին գրում է. «...ճրատարակվեցավ շնորհիվ (թող ուրիշ պատճառները) վանքի մամուլին կուսակրոնության և կուսագրություն»²։ Այս բացատրության մեջ անշուշտ նշարտություն կա։ Մխիթարյան հայրերը ընտրություններ են հրատարակել ժողովածուն, ինչ-որ չափով խուսափելով այն ըմբոստ տրամադրություններից, աշխարհիկ ապրումներից, որ զերսևորվում էին «Եվկիտ Տոնել», «Մատնիլը», «Ինչու», «Միժաղ և գայրույթ», «Ես ինձի» և ուրիշ

գործերում: Անշուշտ, Վանքը պիտի խուսափեր նաև հակաթուրք տրամադրություններից (թեև բացահայտ չէին), քանի որ միաբանությունը իր ճյուղերն ուներ Թուրքիայի տարբեր քաղաքներում:

Սակայն գրքի ոչ ամբողջական հրատարակությունը մասամբ նաև դիտավորություն չէր, քանի որ դուրս են մնացել նաև այնպիսի գործեր, որոնք Վանքը սիրով պիտի հրատարակեր (և հրատարակեց «Բազմավեպում»), ինչպես օրինակ՝ «Հիսուսին պաճուճապատանքը», «Նաչին», «Ալիշանի շիրմին առջև» և այլն: Վանքի հրատարակչական կանոնների համաձայն «Բազմավեպում» տպագրված գործերից առանձին գիրք տպագրել չէր թույլատրվում: Գրքույկի բանաստեղծությունների ընտրությունները մասամբ կարող էին լինել նաև հրատարակիչների սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտություն. երիտասարդ բանաստեղծի, իրենց աշակերտի առաջին գիրքն էին հրատարակում և կարող էին ընտրել՝ հավանել կամ չհավանել:

Այնուամենայնիվ պարզեմք, թե քանի բանաստեղծություն է եղել Վարուժանի ներկայացրած գրքում և որոնք են եղել դրանք:

Ասացիք, որ Վարուժանը «Սարսուռները» ներկայացրել է երկու տետրով: Դրանցից մեկը այժմ պահվում է նրա արխիվում: Թեև շտպագրված բանաստեղծությունները էջերը կտրված հանված են, բայց հիմքերից և նախնական էջագրումից հայտնի է դառնում, որ այն բաղկացած է եղել 84 էջից, և գրված է եղել 78 էջը: 78 էջից կրճատվել է 24 էջը: Մեզ օգնում են Վարուժանի՝ Աթանաս Տիրոսյանին ուղղված նամակի հետևյալ տողերը. «Կգրեք, թե հոգտեղի քերթվածներես միայն երեք հատ ոչ «Գեղունի»-ի մեջ, ոչ ալ «Բազմավեպը» տպած է: Ես ընդհակառակը կարծես 10 կտոր կելլա, վասնզի ամբողջ 2-րդ տետրակեն (որուն մեջ Տոնելը) հազիվ 3—4 հատ է հրատարակված»³: Եվ Չոպանյանին գրած նամակում՝ այս տողերը. «Կեսեն ավելին—կրնամ ըսել լավ մասը—չհրատարակվեցալ»⁴:

«Սարսուռներ» գրքույկում տպագրվել է 18 բանաստեղծություն: Ամբողջի գրեթե կեսը: Ըստ Վարուժանի, 10 հատ է, որ շի տպագրվել ոչ «Գեղունում», ոչ «Բազմավեպում»: Գրքույկում գետեղվել են միայն «Գեղունիում» տպագրվածները: «Բազմավեպում» 1905 թ. տպագրվել է 6 բանաստեղծություն («Դաշտերու տղան» էջ 397, «Նաչին», էջ 514, «Նպատակին», էջ 523, «Հիսուսի պաճուճապատանքը» էջ 518, «Թողեք մեծնամ», էջ 566, «Անցնող տարին», էջ 573), իսկ 1904-ին՝ մեկը («Ալիշանի շիրմին առջև»): Ուրեմն 10-ը ընդհանրապես շտպագրված, 7-ը՝ «Բազմավեպում» տպագրված, դառնում է 17 քերթված: Դրան ավելացրած «Եվկիտ Տոնել» դուցադնավեպը (300 տող), որ դարձյալ տպագրվել էր «Բազմավեպում» (1904), իսկապես դառնում է՝ «կեսեն ավելին»:

Ուրեմն, ձեռագիր երկու տետրերում եղել է ընդամենը 35 քերթված և «Եվկիտ Տոնել» դուցադնավեպը:

Այսօր, երբ մեզ են հասել Վարուժանի ձեռագրերը, մանավանդ «Սարսուռներից» անմիջապես առաջ կազմված «Մրրկահույզ կյանքիներ» և «Փուշի ակոսներ» ձեռագիր տետրերը, հեշտ է ճշտել, թե ինչ սկզբունքով է չեղինակը կազմել «Սարսուռներ» ժողովածուն և որոնք էին այն տաս քերթվածները, որոնք այն ժամանակ ոչ «Սարսուռներում» լույս տեսան և ոչ էլ մամուլում:

1904 թ. Վարուժանը կազմել է մի ժողովածու, «Մրրկահույզ կյանքիներ» վերնագրով, ապա նույն թվականի ուշ աշնանը այդ տետրից ընտրելով և վերամշակելով, կազմել է մեկ ուրիշ ժողովածու՝ «Փուշի ակոսներ» վերնագրով: Այս ժողովածուներում նա գետեղել է 1901—1904 թթ. գրած իր կարծիքով բոլոր լավագույն բանաստեղծությունները, առանց որևէ նպատակային ընտրություն: Սակայն 1905 թ. կազմել է մի նոր ժողովածու՝ «Սարսուռները», այս անգամ արդեն հատուկ ընտրությամբ, հավաքելով միայն 1903—1905 թթ. գրած միաբնույթ բանաստեղծությունները: «Սարսուռները» ոչ թե սոսկ հավաքածու է, այլ միաժամանակ սկզբունքով, գեղագիտական որոշակի շահանիշներով ընտրված շարք: Մնացած սիրային, սուբյեկտիվ ապրումների բանաստեղծություններից Վարուժանը մտադրվել էր կազմել (կամ կազմել էր) մի ուրիշ ժողովածու՝ «Մաշած լար» վերնագրով, որի տպագրությանը խոստացել էր օգնել Ս. Երեմյանը:

«Սարսուռների» քերթվածները որոշակիորեն տարբերվում են մյուսներից, նրանց մեջ առավելապես համամարդկային ապրումներ են: Հեղինակի խոհը, ասելիքը բխում է ոչ թե սեփական ես-ից, անձնական տառապանքից, այլ ուրիշի տառապանքից: Կյանքում բանաստեղծին շրջապատող թշվառությունն է՝ մարդկային տեսքով, որ խորհել է տալիս, և այդ խոհը ծնվում է տառապանքով, ցաված սրտի խորքից: Կյանքի տառապանքից ծնված Վիշտը և այդ վշտի Ամոքման բազմաբնույթ,— ահա «Սարսուռների» հիմնական գաղափարը: «Սարսուռների» առիթով Ռ. Պաղարճյանին գրած նամակում խոսելով Դուրյանի և իր տարբերության մասին, Վարուժանը դիպուկ բնութագրել է «Սարսուռները» և իր ոճը. «Դուրյանի տիրույթյան շարժառիթը նույն իր անձն է, իմինս ուրիշները: Դուրյան կողքս իր չլրնար ժպտեղեն, ես կողքս՝ գուլթես և բարկու-

թեևս: 'Դուրջան կղզա բնությունը... ևս կը բացատրեն՝ դաս... Դուրջան զինքը կը նկարագրեն... ևս զիս կը վերլուծեն»⁶:

«Մարտունների» համար գրված, առաջաբանի դեր ստանձնող «Մուսային» քերթվածը նույնպես բացատրում է, թե ինչ նյութ և խոհ է բովանդակում ժողովածուն: Բնության գաղտնիքները՝ ծովի, խաղերի, հովի ու որտոների շշուռն ու ձայները, բնությունը, Աշխարհը, Աստված, Կյանքն ու Մահը մի կողմից, մյուս կողմից մարդկային հասարակության դարմանալի փոխհարաբերությունները ծնում են բազում ինչուներ, որոնք ի վերջո կենտրոնանում են տառապած մարդու խնդրի վրա, որի շուրջ բանաստեղծը պարուրում է իր սերը, գույլը և դրսևորում իր ներքին գայլույթն ու բողոքը՝ անարդարության անորոշ հասցևով:

«Մարտունների» դադափարական-գեղարվեստական ամբողջության հստակ ըմբռնումից հետո դժվար չէ «Փուշի ակոսներ»-ում ու մյուս տետրում գտնել Վարուժանի հիշատակած այն տաս բանաստեղծությունները, որոնք նա գետնից էլ «Մարտունների» երկու տետրերում, բայց որոնք չէին տպագրվել ոչ «Բազմավեպ»-ում, ոչ էլ «Գեղունի»-ում: Ասենք նաև, որ ձեռագրում նման բնույթի ուրիշ բանաստեղծություններ չկան, միայն ճիշտ պաշքանն է (Իհարկե, չհաշված գրքում լույս տեսածների ձեռագրերը):

'Իրանք էին. «Մատնիչը», «Պապս», «Որբուհին», «Ծա ինծի», «Սրգ խոստովանանքի», «Միծաղ և գայլույթ», «Աստծո ասուպը», «Ինչու», «Մանուկը», «Ինչպես»: Սրանցից առաջին երկուսը («Մատնիչը» և «Պապս»), «Բազմավեպ»-ում լույս տեսած «Քողեք մեռնաձ», «Ալիշանի շիրմի առջև» և «Եվկիտ Տոնել» գործերը հետո բանաստեղծը մտքեց «Ցեղին սիրտը» (1909 թ.) ժողովածուի մեջ, համահնչուն գտնելով՝ նրա ներքին բովանդակությանը: Մնացածները աղպես էլ ոչ մի ժողովածուում տեղ չգտան: Հետագայում հրատարակվել են նաև «Որբուհին» (1946 թ. Երևանում լույս տեսած «Երկեր» ժողովածուում), «Ծա ինծի» («Բանբեր Երևանի համալսարան», 1969 թ. № 3), «Սրգ խոստովանանքի», (Սովետական գրականություն, 1974 թ. № 4) և «Միծաղ և գայլույթ» («Գարուն», 1967 թ. № 4) բանաստեղծությունները:

Անտիպ են մնացել միայն չորսը՝ («Աստծո ասուպը», «Ինչու...», «Մանուկը», «Ինչպես»), որոնք հրատարակում ենք ստորև:

Սվ այժմ, երբ մեզ համար ճշտված է ամբողջական «Մարտունների» ցանկը, երբ մեր առջև է Վարուժանի ներկայացրած ժողովածուն ամբողջությամբ, կարող ենք ավելի ճիշտ արժեքալորել այն, խոսափելով ենթադրություններից կամ ոչ ճիշտ բնութագրումներից: Այլևս հարկ չի լինի ասելու, թե «Մարտուններ»-ից դուրս են մնացել Վարուժանի առաջին շրջանի սիրո գողտրիկ բանաստեղծությունները, թե «Մարտունները» նույն «Փուշի ակոսներ» ձեռագիր ժողովածուն է, որ պարունակում է 55 բանաստեղծություններ, թե «մխիթարյանները խիստ կրճատման են ենթարկում գրքուկը, դուրս գցելով լավագույն մասը, հատկապես հայրենասիրական քերթվածները», «խմբագրում են՝ այն բառերն ու արտահայտությունները, որոնք ակնարկում են Խորքիան»: Լավագույն մասն, իհարկե, տպագրվել է: Հայրենասիրական քերթվածները նախ Վարուժանը սկսել է ավելի ուշ, 1905-ի կեսերից, երբ արդեն ավարտել էր «Մարտունները», ապա այս ժողովածուում հավաքել էր ուրիշ բնույթի բանաստեղծություններ, որոնք վերևում արդեն բնութագրել ենք: «Մարտունները» ստեղծագործական կյանքի երկրորդ շրջանի՝ 1903—1905 թթ., ավելի ճիշտ՝ 1902 աշնանից մինչև 1905 թ. գարուն ընկած շրջանի, միայն Վենետիկի վարժարանում սովորելու տարիների արդյունք էր:

Ժողովածուում գերիշխողը Կարեկցանքի և Սիրո երանգն է ընդհանրապես Տառապալանների նկատմամբ՝ Մարդկային գթարտություն, եղբայրության, տիեզերական օգնության, գորովանքի երազանքով, ինչ-որ տեղ ըմբոստ, ինչ-որ տեղ գայլույթով լցված տրամադրություններով, ժողովրդի նկատմամբ ունեցած խոր սիրով և նրա լավագույն ապագայի հույսով ու երազով: Անազատ կյանքի, անազատ մարդու, թշվառության մասին խոհերը, անշուշտ, կարող էին ծնվել Խորքիանի բնակավայրի տակ հեծող իր ժողովրդի մասին մտորելուց, բայց ժողովածուի բանաստեղծությունները՝ առավելապես համամարդկային ապրումների դրսևորումներ են, ընդհանրապես մարդու, ընդհանրապես թշվառության և աղքատ կյանքից ծնված խոհերի: Հայրենիքի, հալ ժողովրդի ծանր կյանքի կոնկրետ պատկերները, աղգային ոգին հորձանք ստացան նրա բանաստեղծություններում 1905 թ.-ի ամռանից սկսած (որոնցով կազմվեց հաջորդ ժողովածուն՝ «Ցեղին սիրտը»), իսկ «Մարտուններ»-ում դրանք դեռևս չկան, կամ եթե կան, ապա շատ քիչ են, այն սաղմերն են, որոնք պիտի ծարձակեին բանաստեղծի ստեղծագործական կյանքի երրորդ՝ 1905—1909 թթ. շրջանում:

- 1 Ի. Վարուժան «Նամակահի», Երևան, 1965 թ., էջ 57:
- 2 Նույն տեղում, էջ 55:
- 3 Նույն տեղում, էջ 47:
- 4 Նույն տեղում, էջ 55:
- 5 Նույն տեղում, էջ 228:
- 6 «Բանբեր Երևանի համալսարանի», 1969 թ., № 3, էջ 148:

ԱՍՏԾՈ ԱՍՈՒՊԸ

...և աստեղք յերկնից թոթափեսցին,
և զորումթյունք յերկինս՝ շարժեսցին:

ԱՎԵՏԱՐԱՆ

Ա

Վա՛րն, օրենքովն անբընեղի, անխափան՝
Կ'ապրի աշխարհս, իր թըմքիտին մեջ՝ հիմար,
Եվ փառատենչ իր ժրխորին մեջ՝ դաժան.
Կյա՛նք՝ երազող, անտեսելով շիրիմն հար:

Իսկ վերն՝ Միջոցը կըննջե՛ միասին
Իր խորհուրդով՝ շարժում մ'հագած ներդաշնակ,
Ամենագոր սուրբ լծակեն երկնային,
Շարժում մ'որ միշտ կը շափչրփե ժամանակ:

Վե՛րն, ուր Միջոցն անհունություն մը ունի.
Ավասիկ այդ Անհունությունը հրսկա,
— Որ պահարանն է ուրիշ երկու Անհունի—
Այդ սուրբ Հավերժ, Աստվածը այդ կրխոկա՛...

Բ

Ան կը խոկա՝ կը՛հնանան մինչ բոլոր,
Եվ պիտ' չըլլա որ չը խոկա, իսկ հիմա՛՝
Հանույ՛բը հին նոր հանույ՛բով, և վեց օրն՝
Ակընթարթով մը ջախջախիլ կը խոկա:

Եվ կ'որոտա անեղորեն. Ալ ժա՛մն է:
Կը դողողա երկինք դավեն սրբագան.
Եվ կ'ըսեն իր Որդին և Հոգին. Արդ ուզե՛
Հորըն ըզգացման՝ ըզգացումով համաձայն:

Եվ կ'որոշվի հավիտենի Ադրյուրեն
Գործը և ժամն, որք աներկբա կը հաստատվին.
Իսկ և Սերեն... Անոնք երեք օվկիան են՝
Որ միասին կ'ալեծրփին և կըլոտեն միասին:

Հայրն իր կապույտ ծիրանվույն մեջ կը կանգնի՝
Մըփռեցիմ զայն անծայրածիր, հորձանուտ.
Միջոցի մեջ կ'ընեն շարժում մը բազկի՝
Մթնոլորտին մեր գառնելով իր նրկույթ:

Բոլոր Միջոցը կը սարսուի իր խորեն.
Կը շրվմորին բյուր հոգիներ երկնային՝
Ու լռելչայն, Տիրոջ սուրբ կամփը կ'օրհնեն
Մըփանփին մեջ իրենց ներմակ զառփաշին*:

Արփայության արդար սեմին առջևի՝
Մեծ փանդիոին ոսկեղեն լարն, որ կ'երգեր
Արարչության դաշնակությունն, կըխրզվի.
Կը դողդրդան զայն նվագող հրեշտակներ:

Եվ կը գոռա ամեն Մարմին երկրնփի.
Աստղերն իրար կապող անտես մեծ շղթան՝
Կը նարնատի ջլածգական, ուժգնակի՝
Զոր կը կըտրեն Մեծ Զորությունն, հաղթական:

Աշխարհիս դեմ—որ Տիեզերքին մեջ ինկած՝
Հյույն մ'է սուկ, նկատված իրմե լոկ՝ հրսկա—
Մինչ կը մըղեն ամբողջ երկինքը Աստված՝
Նա կ'երագեն. շի՛ խորհիր բնավ իրեն մահ:

Դ

Հանկարծ շողերն արեգակին կ'ամփոփվին.
Կը փաշե Տերը սև պատանփ մ'անոր վրա՝
Որուն թուփ գույնը կը ցայտի լուսնակին,
Եվ աշխարհիս կուրծփին ուղխով մը կ'իջնա:

Կը թոթափին աստղերն երկնի կամարեն,
Վար բերելով ամենն իրեն կրակն ու բոց.
Շեկ շեկ շանթերը շեշտակի կշաշեն,
Շանթե փարերը կ'անձրևին հոծ ու հոծ:

Վա՛ր կը թափե կապույտն իրեն զենն ու զարդ,
Եվ հորձանուտ կեռա չորս դին մըթնոլորտ.
Աշխարհս ա՛լ կ'ելլե նամբեն բոցացայտ,
Զի հնազանդեր ընել արփվույն շուրջն ոլորտ:

Ամեն լեռներ, սարեր՝ Վեսուվ կը դառնան.
Ամեն դաշտեր ալ՝ Սահարա կըրակի.

* Զուրբաշ՝ նշանակում է ոսկիով քաշված, ոսկեթելով փանդնագործած:

Լույծ կապարի պես կ'եռեփի օվկիան,
Եվ ձերունի գետ՝ Նեղոսն ա՛լ կը ցամփի:

Թագն ու գըտակ կ'ըլլան փոշի մ'միասին,
Ու մեկ փքսոր՝ ցընցոտին հետ ծիրանվույն,
Ու մեկ մըղեղ՝ դըղյակը հետ հյուղակին,
Ու ծիծաղն ալ արտասուփին հետ՝ արյո՛ւն:

Բողբոջումներն, ամեն երկիր, կը խամբին.
Հորն սընուցած՝ փոշի՛ կըլլան դալարիփ.
Հուրն ալ ամբողջ երկրովս արբշիո՛՝ մոլեգի՛ն,
Որ կը կըրծե հողն՝ ընելով ցուրտ մոխիրփ:

Կը մարե կյանքն իր վերջին կայծն ամենուր—
Աղաղակներ և լալոններ կը լըռին,
Այլ սոսկ երբեմն՝ մեռելական ընդհանուր
Խըռըլտյուններ կ'ըլսվի մահվան փոսերե:

Հորիզոնն՝ այս կեդրոն մարած հնոցին
Կը բոլորե հեֆոտ պըսակ մը բոցյա
Եվ վեհ կատարն Հիմալայյան ահագին՝
Այս ավերին՝ խանձած, սև դրոշ մը կ'ըլլա:

Իր հանճարի հրաշքներուն հետ, լալկան,
Հրածեշտ կուտա Մարդու օրենքին իր կենաց.
Եվ Աստրծո մեծ Հանույփին երկնի վրան՝
Աշխարհս կ'ըլլա ասուպ մ', ասո՛ւպ մը մարած:

Ե

Եվ այս ասուպը մարդկության անյունին
Սափոր մ'եղած՝ զինք մութին մեջ կ'անդաստե*,
Եվ երթալով երրորդության Սուրբ սեմին՝
Կը հեծկըլտա. Ավասիկ եմ, արդ դատե՛...

16 հոկտեմբեր, 1903

ԻՆՉՈՒ...

Ա.

Տեսա արևն որ ելավ...

Տեսա արևն որ մըտավ.—

Բոցեղեն գունդ մը սև խորֆերեն ժայթֆեցին
Դեպի ուրիշ սև խորֆերու որկորին:

* Անդաստական, կամ աստանդական բառից, նշանակում է թափառական, այստեղ՝ կթափառի իմաստով:

Եվ օրվան հետ էականերու կարն կյանքեն
Թիվ մըն ալ, ո՛հ, հավերժության թվին անցավ.
Տերև մըն ալ գետն ինկավ ծառեն, պուրակեն.
Հյուսիս մըն ալ գրկեց պատանքն համր, անցավ:

Արծիվ մըն ալ թավալ, անթռիչ, անկենդան
Հեղեղատին տիղմը գրկեց, ժայռն ցած.
Ջյունահյուսեն ֆանի մ'հյուղակ ալ փրլան.
Աղֆատ կուրծ մ'ալ, ֆուրջերե հին և մաշած,
 Բացվեցավ դեպ ֆամիին,
 Դեպի ձյունին, եղյամին:

Իր ավարովն անվերադա՛րձ ալ այս հեղ՝
Հողամաղ* մ'ալ կըլվեցավ ժայռին տակ.
Եվ դիակ մ'ալ անյուն դարձավ. իսկ հյութեղ
Անյուն մ'ալ թարմ տունկ մը եղավ հողեն տափ:

Սակայն ամեն բան կ'երևնա դարձյալ նույն...
Այն ի՞նչ դաշտ է՝ որ կ'հրդանա, կը ստեղծե.
Այն ի՞նչ հեղեղ է՝ որ կ'ավրե, կը կըրծե. —
Նորք, շփեղ, կը հաջորդե միշտ հրնույն,

 Իբր հագներ գին** նոր կեղև
 Եվ կամ թռչնիկը նոր թև:

 Կյանքն հարածամ կ'արտադե*
 Իր պրտկունքով, երակով,
 Իսկ մահը միշտ կը ֆանդե
 Իր ժանիքով ու նանկով:

Առաջինը, շոա՛յլ, արևն ունի և սուրբ շաղ,
Վերջինն, ագա՛հ, կիզող խորշակն ու մանգաղ:

 Այս անիվին վրան ահա
 Միշտ մարդկությունը կ'երթա:

Կ'երթա՛ մոխրին մեջ հույսերու սրնոտի,
Լըռած երգի, մարած աչքի, փակ սրտի:

Եվ մարդկությունը կ'երթա՛,
Կուրծֆին կոկոն մը՝ կոխելով ծաղիկներ,
Շուրթին հակատ մը՝ նրզմելով գանկ մը ծեբ,
Գիրկը մանուկ մը՝ կարդալով շիրիմներ,
Եվ մարդկությունը կ'երթա՛...

Այս օրոցֆին և պատանքին մեջտեղ կա
Բան մը՝ որ միշտ կը գեռա խոլ, մոլեգնած—

* թռչունի տեսակ:

** Բույս (գիճի):

*** Հավանաբար պիտի լինի կ'արտադրե:

Կրոնիկն է՝ փոքր Միջատեն Մարդն հրակա,
Եվ տարաբախտ Մարդեն ալ դեպի Աստված:

Ինչպես որ նավն՝ ալվույն, ալին՝ ժայռին դեմ,
Այս կրովին մեջ կա բան մ'որ միշտ կ'հռչոտվի—
Մարդն է Սիրո և Դրժանի մը դրժխեմ.
Մարդը՝ միջև Տրգիտության և Ազնրվի.—

Թրթուրն որ գաղտ կը մըտնա
Մանիշակին ծոցն աղվոր...
Շեկդ դեմի մը վրա
Զույգ մը շիլ աչք անսովոր:

Մարդը հարուստ Սընդուսին
Եվ բանկոնի գունատ, հին,
Որ է՝ ծփանման հուլտյունին անոթի.
Եվ արբշիռ ձայները Միծաղի ու Խընդի:

Այս մարտին մեջ կա բան մ'որ միշտ կը վառի
Եվ ինքզինքն հուսկ կը դարձնե ցուրտ անյուն,
Հրդեհումն է ինչպես ինքնու իր մեջ Մարդուն,
Խոլ մաքառումն է Ուղեղի և Սըրտի,

Եվ կիրքերու կոհակաց,
— Ովկեան՝ սըրտի՛ մեջ դըրված:—

Դեպի Փառքին՝ մագլցումն է փափափոտ
Անհագ մոլի, արյունլվա ու հեփոտ:
Արշավանման է հետո՝ դեպի Ապագան,
Առանց երբեք գիտնալու թե ըստվերն այն
Միշտ կը փախչի՛, միշտ կը փախչի՛, չի կենար,
Մերին քայլին իր, քայլն առած հավասար...
Սը մը արդյոք պիտ' գրկե՞նք այդ Ապագան՝
Երբ ինքն անհուն, սուզի Անհունն հավիտյան:
Խե՛ղն մարդ... ինչնող իր մըսին մեջ բան մը կա
Որ միշտ կ'ուզե ելլե՛լ, և, ո՛հ, չի՛ կրնար.—
Անդի՛ն ամսեն, անդի՛ն լուսեն, աստղին վրա՝
Գըտնիլ այն տեղն՝ ուր կը ննջե Բարին հար,
Երթալ, գատվի՛լ աշխարհե,
Որտեղ միշտ Զարը կ'իշխես:

Արդեն Աստված ըզմեզ պատժեց այն օրեն՝
Երբ մարմնույն մեջ դրավ հոգին լուսեղեն,
Զին այն զուր տեղ կ'ըղձա ելլել դեպի վեր՝
Իրեն արմատը լավ մ'հողին է խրեր... ,

Ան, այս հորձանքը անընդհատ կ'ընկլուզի.
 Ընկլուզելով կը վազե:
 Էական, հոգնած, իր պաշտումով կը սուզի
 Լուսօրայան մեջ: Կերագե՛:

Թևեերը վեր, դեպի Անոր հուսկ հառած՝
 Մեղրամոմի պես կը հալի, սրտաբաց.
 Եվ կը հեծե. — «Դո՛ւ գիտես լոկ...» —
 Վերջապե՞ս...
 — Կեցի՛ր, լուսօրյա՛ն, խոր, քրտամնելի, սրտակե՛զ...

Գ

Ջինջ գո՛ղջեր մ'էր, խորհրդավոր ատենն այն՝
 Երբ կարծես գորշ դաշտերու
 Մաղիկներն ասող եղած երկինք լուռ կ'ելլան՝
 Դիմակն էին պննելու.

Երբ կ'երագե մարդ հորիզոնն հորիզոն,
 Եվ վերջապես կուգա հանգչիլ լուսնի վրան՝
 Որ կը ժողվե երկնի հրմայֆն իր կեդրոն՝
 Եվ մեր հոգվույն կը բանա վիհ մը խոկման:

Ժայռի մը վրա կեցած էի երագուն՝
 Որուն ոտքեն ծովը կատղած կը բացվեր.
 Կը միանային զույգ կապույտներն հո՛ն, հեռո՛ւն.
 Այդ երկրնֆին ու երկրրին համբույրն էր:

Բայց կը նենգեր խաբեբա ծովն այդ համբույրն —
 Վերցրնելով մերթ ալիֆե վարագույրն
 Լանջֆեն՝ երկնի կու տար ցույց
 Իր վիհն սիրտն հորձֆի, մոալլի ու դրժման.
 Այսպես պագավ երկրիս այն մարդը Հուտան՝
 Երկրնֆի մարդն՝ ըզՀիսուս...

Կը կրովեր միտքս մըտածման մ'հետ անել.
 Ես ուզեցի ալիֆներուն տալ զանի.
 Վախցան անոնք իրենց ծոցին մեջ թաղել —
 Ի՛նչ, մըտածումը ծովուն հետ կը շափվի՞:

Մեջս կ'ուռչեր երագը մեծ Օրենֆին
 Զոր առչի մասն երգիս պատմեց սարսուտով.
 Կ'ուռչե՛ր, ուղեղըս կը կըրծեր միասին.
 Հակատես վեր կը շոպլըվեր մըշտախոռով:

Եվ ես հիմար, և ես սպշած ու ոտֆի,
 Վեր վերցուցի տրկար քևերըս երկու.

Իողով, շուրթերըս դեպ՝ Խորհուրդն երկրնի՝
Վիժեցին սա ահավոր հարցումը. Ինչո՞ւ...

Ինչո՞ւ:— Ահա հետս արիւնները լրեցի՛ն.

Երկինք լոց, լրեց՛ց Ան.

Կապույտին վրա քար կրտրեցան աստղ, լուսին,

Քա՛ր կրտրեցավ պատասխանն:

Հարկ է որ մարդ գոչե, և վիհ, լեռ ձայն տան,

Հարկ է մեզի հետ խոսին հին-հին դարեր՝

Բավ է որ գիրք մը թղթատենք պատմական.

Հարկ է լրսին մեզ նամակով՝ աշխարհնե՛ր.

Հարկ է Մովսես զարնե մականը ժայռին՝

Եվ ան՝ իր հորդ արցունքն ընե պատասխան.

Մինչդեռ հարկ է հարցուփորձենք կաթոզին

Աստված մ՝ ու ե՛տ դառնանք տրխուր, ձեռնունայն:

Հոն, ժամերով ըսպասեցի. լրություն՛ն:

Ես ինք ըսի. Թե՛րես Աստված, դողարով.

Կը պատրաստե պատասխան:

Հոն, օրերով ըսպասեցի. լրություն՛ն:

Ես ինք ըսի. Պատասխանն հույլ, լուսին քով

Կը տրնտրնա. է նամբան:

Ամիս, տարի անցան գացին. լրություն՛ն.

Պատասխանեն մեկ ծըվեն մ՝արիք շեկավ.

Հոն, աշեհուս միշտ առջնն էր իմ ինչո՞ւն,

Լուսնակին մոտ և աստղերուն մեջ անբավ:

Այդ հարցումն սև, կուպր հագած, այլանդակ,

Կը վիակեր վրան երկնի կուրծքին մանիշակ,

Ինչպես ծովու մը մեջտեղ

Կը սեպանա ժայռ մ՝ահեղ:

Ան՝ վսեմ աղտն էր իմ հոգվույս մըթագին

Զոր քրսեցի երկնի վսեմ նակատին...

10 փետր., 1904

¹ Բանաստեղծութիւնը ունեցել է նաև Դ մաս, ընդամենը վեց տող, որը սակայն հեղինակը չնշել է՝ նոր բովանդակութիւն հաղորդելով բանաստեղծութեանը: Ահա այդ չնշված տողերը.

...Ո՞վ հավատքն իմ հայրերուս,

Մածկե շողովդ այդ ինչո՞ւս...

Ես թող բոլոր իմ մեղերովը տարտամ

Մեջն ընկրդիմ Արշայուլսիդ կենսատու.

Տեր, օրենքիդ միշտ թող ըսիմ. կը հավտամ...

Տեր, Խորհուրդդ հրբեք չըսիմ թող. Ինչո՞ւ:

Ա.

Ով պրենեց գայն այս աստիճան գեղեցիկ՝
Շուշան նակտով, խուպուպներով գեղաշեն,
Սև-մարգարիտ աշխով, հոնֆով կոր մահիկ,
Եվ այտերով վարդ՝ որ եղեմ կը բուրեն...

Երբ կը ժպտի ան՝ արշալույսն է բացվող՝
Գրավիչ գույնով և թարմությամբ կենսատու.
Եվ կամ զվարթ կապույտին մեջ լուսնին շող,
Ուր կա հրապույր մը հոգիներ դյուրեկու:

Երբոր կու լա՝ իր արցունքն է՝ գարունին
Առտրվան ցողն՝ որ թուլորեն կը հոսի
Բոց աշխերեն հուրիներու օդային,
Եվ կը փրովի դալարին վրա մայիսի:

Երբ կը ֆալե՝ նառագայթն է՝ որ դողա.
Երբ թոթովե՝ դաշըն մը մունջն է հովի.
Կամ դայլայլող—երկինքն ի վեր—գանարեա*.
Երբ կը խոսի՝ ան խորհուրդն է ու կ'լուծվի՝:

Երբ կը նրնջե, լընեցեֆ, ով մարդիկ, ան
Հրեշտակ մըն է՝ որ կ'երագե բացօթյա.
Իր խաղաղիկ միջոցին մեջ, ձերին ձայնն
Ահաբեկող որոտման պես պիտ'ըլլա:

Մի՛ դրպրնեֆ ձեր շրթունքներն իրենին.—
Ձեր խորշակներն այդ կոկոնները կը խամրին.
Եվ մի դրնեֆ նակատներն իդ իր նակտին,
Ձի երկինքն այդ կը պըղտորի ձեր ամպեն:—

...Ան՝ Տիրոջ ֆով նանանչի փունջ մ'էր առաջ.
Օրոցֆին մեջ առոփուն ծաղիկ մ'է հիմա.
Ապագային, նակատագրին հետ՝ սառած,
Շիրմին մեջ կմախքը տերևի մ'պիտ ըլլա:

Բ

Անմե՛ղ մանուկ, դու տակավին չե՛ս գիտեր՝
Թե ինչպիսի՛ բախտ մը գրված է նակտիդ,
Եվ գրլխուդ վրա կը դառնան ի՛նչ մըրբիկներ.
Ի՛նչ հորձանքներ կը պտույտֆեն ֆու չորս դիդ:

Կը զգա՞ս արդյոք՝ սընդուսներու մեջ ֆրնֆուջ՝

¹ Վերնագրից հետո կա ընծայական՝ եղբորս, Վահանիկին, որը սակայն չնջել է:
* Գանարեկա—բանարիկ, երգող թռչուն:

Թե կտրել քեզ ի՛նչ համբա է մընացած,
Կամ կը տեսնե՞ս, թե երուն տակ մորդ անուշ,
Փափուկ կուրծքիդ ի՛նչ տեսակ նետ է ուղղված:

Գ

Օրերդ հիմա ծաղիկներու մեջ կ'անցնին
Դու ժրպիտն ես՝ խորն արցունքին մեք անվերջ,
Դարունի երգն՝ հյուսած մեք սան հառաչի՞ն,
Զիթենի հյուղը մեք կյանքի մարտին մեջ:

Արդ կը պահվին գրգվող սրբաի վրա ըզքեզ՝
Որ կըրելով կը գուրգուրա քու դիմաց.
Դու նորաբույս, իբրև արքա՝ պաշտված մ'ես
Էականերու այլ խորշումած, ծեղացած:

Դեռ տըղեկ մ'ես, և պիտի օր մը մեծնաս.
Որ, կըրելով, կը գուրգուրա քու դիմաց.
Դո՛ւ նորաբույս, իբրև արքա՝ պաշտված մ'ես
Կամ որպիսի օրենք ըզքեզ կը դատե:

Թերևս վա՛ղն արտասվելով Վիշտին մեջ՝
Մեք մըտներուն անոր զաղտնիքը մեկնես.
— Քրբրես Կյանքին խավերը խոր ու անվերջ
Կամ հանչըցնես Մարդը՝ Մարդուն ողբակեզ:

Օ՛ր մը. — այդ օ՛րը մեզ համար պիտ' մնա
Խորհո՛ւրդ, մինչ դու թերևս ըլլաս անոր տեր.
Եվ սերմանես, լուսավորես զանիկա՝
Զոր հանչնան քո անունովդ ե՛տքն եկողներ:

Երեն՛կ քեզի՝ երբ որ մայրիկդ օրն այն,
Այլևս հանգչած իր շիրմին մեջ մըթամած,
Սոսափն առնե դափնիներուդ, որք ըլլան
Շուշաններու հետ միասին բողբոջած:

Երեն՛կ քեզի, երեն՛կ ազգիդ ալ համակ,
Երբ (Աստծո կամքովն եղած հաղթական)
Այն մեծ համբո՛ւյրն ըլլա Դուկին հիշատակ՝
Զոր անցյալն կ'առնե անմահ ապագան:

22 հունիս 1903

(Ամսաթիվը մատիտով ջնշված է)

ԻՆՉՊԵՍ

Պատուհանիս առջև աղոթքս ընելու՝
Խոռով գոտ նիրհես կ'ելլեմ կանուխ մ'ատուվանց.
Կը բանամ սիրտս անծանոթին ահարկու՝
Ուր միշտ արթուն կը ծածկվի Աստրված:

* Երե կա՞ որիչ կենդանի բռնելու ցանց:

Կը տատամսի, տե՛ս, արշալույսը նամբան՝
Մարմրող նայվածքն առտուններուն աշունի.
Եվ բնությունն հագած իր սև պատմունան՝
Զարթնումի մոտ՝ կես փունի մեջ կը թալթլի.
Ինչպես կ'ըլլան մրտածումներըս բոլոր՝
Ապագայիս առեղծվածին մեջ մոլոր:

Մեծ Զրանցփին (որ վեներտկի կ'հորինե
Մեջփին կապույտ, ծրփուն գոտի մ'հակընթաց)
Մեկ ճյուղը կոր՝ պատմամանիս առջևն է.
Իրեն կանաչ ջուրն հանդարտիկ փուն կ'ըլլա,
Ինչպես տրխուր հուշերուս ծովն երագուն՝
Զոր հուզելու՝ սիրտըս չրզգար փաշություն:

Կուրծփը ջրանցփին ակոսելով վերեն վար՝
Տառապածի մ'կու գա *կոնտուն*, կը սանի
Եվ արձագանքով կը կորսովի, չ'երևար
Կամուրջին տակ՝ որ մուրին մեջ կ'հսկայի.
Ինչպես որ հույսը կը մեռնի նոր ծնած՝
Եվ մրտփիս մեջ կ'ուռի պատրանքը կենաց:

Հետո դարձյալ ամեն ձայներ կը դադրին
Արձագանքին և փրնահատ ջուրերուն.
Եվ գիշերն իր կույր աչքն հառած հորզոնին
Կը սպասե, լուռ, արեգակին հուրերուն.
Ինչպես որ դե՛ն էս կը սպասիմ ձեռնամած
Այն մեկ շողին՝ հակառակփիս խոստացված:

13 նոյեմբեր, 1903

В. А. Габриелян — Первоначальный состав сборника Д. Варужана «Содрогания».— Первая книга Даниела Варужана была почти вдвое сокращена при напечатании (1906). До сих пор было неизвестно, сколько и какие стихотворения были выключены из сборника. Исследование новых архивных материалов, рукописей Варужана позволяют автору установить, что в книгу не вошли 17 стихотворений и одна поэма. Большинство из них в свое время опубликовано в печати или вошло в другие сборники. Пять ненапечатанных стихотворений впервые публикуются здесь.